ՆԱԽԱԳԻԾ

**Հավելված**
**Առողջապահական և աշխատանքի**
**տեսչական մարմնի կառավարման խորհրդի**
**2022 թվականի նոյեմբերի --ի N --- որոշման**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

# 2023 ԹՎԱԿԱՆԻ
# ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ
# ԾՐԱԳԻՐ

Երևան 2022

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | |
|---|---|
| **Հապավումներ** ........................................................................................................ | 3 |
| **Ներածություն** ........................................................................................................ | 4 |
| ԱԱՏՄ նպատակ ........................................................................................................ | 5 |
| ԱԱՏՄ խնդիրներ ........................................................................................................ | 5 |
| **Կառուցվածք** ........................................................................................................ | 5 |
| Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ ..................................... | 6 |
| Տարածքային ստորաբաժանումներ՝ *Տարածքային կենտրոններ*........................................ | 6 |
| *Սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետեր (ՍԲՀԿ)*............................................ | 7 |
| **Քարտեզ 1** ԱԱՏՄ ՏԿ տեղաբաշխվածությունը ՀՀ տարածքում .................................... | 8 |
| **Քարտեզ 2** ԱԱՏՄ ՍԲՀԿ տեղաբաշխվածությունը ՀՀ տարածքում.................................. | 9 |
| **ԱԱՏՄ ձեռքբերումների համեմատական ցուցանիշեր**.................................................... | 10 |
| **ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ**.................................................................................... | 13 |
| **Բաժին 1. ԱԱՏՄ վերահսկողության ոլորտների ընդհանուր վիճակը** ................................ | 14 |
| **1.1 Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ**................ | 22 |
| **1.1.1 Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման** ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը .................................................. | 23 |
| **1.2 Բժշկական օգնության և սպասարկման ոլորտ** ........................................................ | 25 |
| **1.2.1 Բժշկական օգնության և սպասարկման** ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը ...................................................................................... | 26 |
| **1.3 Դեղերի շրջանառության ոլորտ** ........................................................................ | 27 |
| **1.3.1 Դեղերի շրջանառության** ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը .......... | 28 |
| **1.4 Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտ** ........................................................ | 29 |
| **1.4.1 Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման** ոլորտի առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը ...... | 30 |
| **Բաժին 3. ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում առկա խնդիրներ և բացահայտված ռիսկերը** ........................................................................................ | 31 |
| **3.1.Վերահսկողության իրականացման ժամանակ կանխատեսվող խնդիրներ** .................. | |
| **3.2. Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում առկա օրենսդրական խնդիրներ** ..... | 31 |
| **Բաժին 3. Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների ու ռիսկերի նվազեցմանն ուղղված, ինչպես նաև կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ**........ | 31 |
| **Հավելված 1. Ժամանակացույց՝ ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում 2023 թվականի խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների**............ | 33 |
| **Հավելված 2. Ծրագիր՝ ԱԱՏՄ 2023 թվականի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների** ........................................................................................ | 40 |

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | | |
|---|---|---|
| **ՀՀ** | - | Հայաստանի Հանրապետություն |
| **Խորհուրդ** | - | Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդ |
| **Գրասենյակ** | - | Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ |
| **ԱԱՏՄ** | - | Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին |
| **ՌԳՍՊՎՎ** | - | Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչություն |
| **ԻԱՓՎ** | - | Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն |
| **ԻԽՀՏԱԲ** | - | Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին |
| **ԴՇՎՎ** | - | Դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն |
| **ԲՕՍՎՎ** | - | Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության վարչություն |
| **ՀՍՀՎՎ** | - | Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն |
| **ԱՕՎՎ** | | Աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն |
| **ՏԿ** | | Տարածքային կենտրոն |
| **ՍԲՀԿ** | | Սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 444-Ն որոշմամբ՝ ստեղծվել է ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը: «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 10-րդ մասի և 4-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը 2018 թվականի հունիսի 11-ին վերակազմավորվել է Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, որի կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն) հաստատվել է ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ: ՀՀ վարչապետի 2020 թվականի հուլիսի 3-ի N 768-Լ և 2021 թվականի հուլիսի 23-ի N 781-Լ որոշումներով՝ Կանոնադրության մեջ գործունեության վերաբերյալ կատարվել են փոփոխություններ և լրացումներ:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշմամբ՝ ԱԱՏՄ համար սահմանվել է 280 հաստիքային միավոր: Կանոնադրական գործառույթների ավելացման արդյունքում՝ մասնավորապես աշխատանքային իրավունքի, ՀՀ վարչապետի 2020 թվականի հուլիսի 16-ի N 808-Ա որոշմամբ ԱԱՏՄ համար սահմանվել է 340 հաստիքային միավոր՝ ավելանալով 60-ով, իսկ 2022 թվականի մայիսի 23-ի N 568-Ա որոշմամբ 340 հաստիքային միավորը նվազել է 1-ով և հաստիքների առավելագույն թիվ սահմանվել է 339 հաստիք:

2022 թվականի հուլիսի 6-ի ««Պետական սահմանի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-326-Ն օրենքի և 2022 թվականի սեպտեմբերի 14-ի «Մաքսային կարգավորման մասին» ՀՕ-353-Ն օրենքի ընդունմամբ ԱԱՏՄ-ին վերապահված պետական սահմանում սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը վերապահվել է Մաքսային մարմիններին: Պետական սահմանում նշված վերահսկողությունը ԱԱՏՄ-ն իրականացնում է ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N 1584-Ն որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով: Նշված որոշումը ուժի մեջ է մտնում 2022 թվականի դեկտեմբերի 1-ից:

**ԱԱՏՄ նպատակն է՝** օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումը:

**ԱԱՏՄ խնդիրներն են՝** բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատողների անվտանգության ապահովման, առողջության պահպանման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտներում:

## ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ԱԱՏՄ կառուցվածքում ընդգրկվում են Տեսչական մարմնի ղեկավարի, Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի, Տեսչական մարմնի ղեկավարի օգնականի, Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի օգնականի պաշտոնները և կառուցվածքային ստորաբաժանումները: ԱԱՏՄ-ն բաղկացած է հիմնական մասնագիտական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներից: ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է տեսչական մարմնի ղեկավարը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները: ԱԱՏՄ ղեկավարի 2020 թվականի փետրվարի 20-ի N 152-Ա հրամանով հաստատվել է ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունը, և սահմանվել է դրա տարածքային կենտրոնների տեղաբաշխվածությունն՝ ըստ մարզերի:

ԱԱՏՄ աշխատողների գործունեությունը համակարգելու, ընդհանուր շահերը արտահայտելու, անդամների աշխատանքային ու դրա անդամների աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու նպատակով 2019 թվականի հուլիսի 11-ին ստեղծվել է ԱԱՏՄ արհեստակցական կազմակերպությունը, որը հանդիսանում է ԱԱՏՄ աշխատողների կամավոր միավորում:

**Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ**

- Ոլորտային ստորաբաժանումներ
- Դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն,
- Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության վարչություն,
- Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն,
- Աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն, այդ թվում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության և աշխատանքային օրենսդրության իրավական վերահսկողության բաժիններ:
- Մասնագիտական աջակցող ստորաբաժանումներ
- Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչություն,
- Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն, այդ թվում՝ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժիններ,
- Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին,
- Որակի ապահովման վարչություն,
- Ջորահավաքային բաժին:

**Տարածքային ստորաբաժանումներ**

- Տարածքային կենտրոններ


ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
(374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

- Երևան քաղաքի տարածքային կենտրոն,
- Հյուսիսային տարածքային կենտրոն, այդ թվում Իջևանի և Գյումրու բաժիններ,
- Արևմտյան տարածքային կենտրոն, այդ թվում Էջմիածնի բաժին,
- Արևելյան տարածքային կենտրոն, այդ թվում Գավառի բաժին,
- Հարավային տարածքային կենտրոն, այդ թվում Կապանի բաժին:

➢ Սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետեր (ՍԲՀԿ)

- «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
- Մեղրիի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
- Բավրայի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
- «Շիրակ» օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
- Բագրատաշենի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
- Այրում-Ջիլիզայի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
- Գոգավան-Պրիվոլնոյեի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ:

**ՔԱՐՏԵԶ 1**

ԱԱՏՄ ՏԿ տեղաբաշխվածությունը ՀՀ տարածքում



**ՔԱՐՏԵԶ 2**

ԱԱՏՄ ՍԲՀԿ տեղաբաշխվածությունը ՀՀ տարածքում



## ԱԱՏՄ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԵՐ

➢ ԱԱՏՄ վերահսկողական գործառույթներն առավել թիրախային իրականացնելու և պլանային ստուգումներ կազմակերպելու, վերահսկողության ենթակա տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը հաշվարկելու, ըստ ռիսկայնության դասակարգելու և ստուգումների տարեկան ծրագիր կազմելու նպատակով ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1124-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ և լրացումներ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 25-ի N 1948-Ն որոշմամբ: Փոփոխությունը կատարվել էր հաշվի առնելով COVID-19 համավարակով պայմանավորված ԱԱՏՄ կողմից իրականացված մշտադիտարկումների և ստուգայցերի, ինչպես նաև վարչական վարույթների և ստուգումների արդյունքում վիճակագրական տվյալների վերլուծությունը, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման 10-րդ կետը և հիմք ընդունելով «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1935-Ն որոշումը, ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարված լրացումներն ու փոփոխությունները (ԱԱՏՄ-ին վերահսկողական լիազորությունների վերապահումը), «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման» 18-րդ միջոցառումը, ինչպես նաև ելնելով անհատական ռիսկի չափորոշիչի և չափանիշների առանձնահատկությունից և անհատական ռիսկի ըստ աշխատողների թվի տնտեսավարող սուբյեկտներին միմյանցից բաղդատելու և հնարավորինս նվազեցնելու միևնույն չափանիշներով տնտեսավարող սուբյեկտների կրկնվելու հավանականությունը և Հայաստանի Հանրապետությունում գործող ու ԱԱՏՄ վերահսկողության ենթակա ոլորտը կանոնակարգող իրավական ակտերը:

➢ Կազմվել և Խորհրդի կողմից 2021 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 10-Լ որոշմամբ հաստատվել է 2022 թվականի ընթացքում իրականացվելիք ստուգումների ծրագիրն ըստ վերահսկողական 5 ոլորտների՝ ներառելով 700 ստուգում (547 բարձր ռիսկայնությամբ, 153 միջին ռիսկայնությամբ) 647 տնտեսավարող սուբյեկտներում


ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

ստուգում իրականացնելու նպատակով: 2020 թվականի համեմատ պլանավորված ստուգումների քանակը աճել է՝ 509-ով, տոկոսային արտահայտությամբ՝ 266%, իսկ 2021 թվականի համեմատ՝ 434-ով, տոկոսային արտահայտությամբ՝ 163%:

➢ Մինչ 2020 թվականի ապրիլի 30-ը ԱԱՏՄ կողմից թեմատիկ ստուգումներ իրականացնելու նպատակով ստուգաթերթեր հաստատված չեն եղել: ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշմամբ հաստատվել են ԱԱՏՄ կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների առաջին ստուգաթերթերը, որից հետո փուլային կարգով տարբեր ամսաթվերով 2020-2022 թվականներին հաստատվել են մյուս ստուգաթերթերը, ինչպես նաև գործող ստուգաթերթերում կատարվել են լրացումներ և փոփոխություններ, այդ թվում ըստ ոլորտների.

- սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային բնագավառում ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը՝ համաձայն N 1 հավելվածի (թվով 3 ստուգաթերթ): Փուլային տարբերակով հաստատվել և կատարվել են փոփոխություններ և լրացումներ: 2022 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ ստուգաթերթերի ընդհանուր քանակը կազմում է՝ 22 ստուգաթերթ: (27.08.2020թ N 1437-Ն, 10.12.20 N 2046-Ն, 31.03.22 N 428-Ն, 17.06.22 N 903-Ն):

- դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության բնագավառում ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը՝ համաձայն N 2 հավելվածի (թվով 2 ստուգաթերթ): Փուլային տարբերակով հաստատվել և կատարվել են փոփոխություններ և լրացումներ: 2022 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ ստուգաթերթերի ընդհանուր քանակը կազմում է՝ 3 ստուգաթերթ: (27.08.20 N 1437-Ն, 28.07.22 N 1166-Ն):

- բժշկական օգնության և սպասարկման բնագավառում ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը՝ համաձայն N 3 հավելվածի (թվով 8 ստուգաթերթ): Փուլային տարբերակով հաստատվել և կատարվել են փոփոխություններ և լրացումներ: 2022 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ ստուգաթերթերի ընդհանուր քանակը կազմում է՝ 17 ստուգաթերթ: (27.08.20 N 1437-Ն, 27.05.21 N 861-Ն, 07.04.22 N 433-Ն,

26.05.22 N 748-Ն, 23.06.22 N 927-Ն, 14.07.22 N 1054-Ն, 21.07.22 N 1106-Ն, 01.09.22 N 1364-Ն):

- աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառում ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթը՝ համաձայն N 4 հավելվածի (թվով 1 ստուգաթերթ): Փուլային տարբերակով հաստատվել և կատարվել են փոփոխություններ և լրացումներ: 2022 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ ստուգաթերթերի ընդհանուր քանակը կազմում է՝ 3 ստուգաթերթ (27.05.21 N 861-Ն, 03.03.22 N 239-Ն):

- աշխատանքային իրավունքի բնագավառում (բացառությամբ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառի) ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 10-ի թիվ 299-Ն որոշմամբ լրացվել է Հավելված 5-ով (թվով 1 ստուգաթերթ):

- Հաստատվել է ԱԱՏՄ 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ Տեսչական մարմնի կանոնադրական գործառույթները և վերջինիս շրջանակներում ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն առավել արդյունավետ և ըստ ժամկետի կանոնակարգված իրականացնելու նպատակով:
- ԱԱՏՄ 2018 թվականից **«Աշխատանքի տեսչությունների միջազգային կազմակերպության»** կազմի մեջ է և 2023 թվականից կդառնա լիիրավ անդամ:
- ԱԱՏՄ և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի (այսուհետ՝ ՄԱԶԾ) միջև 2021 թվականի հունիսի 10-ին ստորագրվել է հուշագիր, համաձայն որի 1459-Ա որոշմամբ կցված տարածքի համար նախագծանախահաշվային աշխատանքներն իրենց կողմից կատարվել են բարեգործական հիմունքներով, ինչպես նաև ֆինանսավորել են էներգախնայող աշխատանքների իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցների որոշ չափով: Նշվածի վերաբերյալ ՀՀ կառավարությունը 2022 թվականին մասնակի հատկացրել է ֆինանսական միջոցներ և հաջորդ ֆինանսական միջոցների հատկացումը ներառել 2023-2025 թվականների ՄԺԾԾ:

➢ ԱԱՏՄ գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով 2019 թվականի դեկտեմբերին գործարկվել է ԱԱՏՄ պաշտոնական կայքէջը www.hlib.am հասցեով, իսկ դիմում-բողոքներին արձագանքելու և ընթացք տալու, ինչպես նաև ԱԱՏՄ կապը հանրության հետ ավելի արագ և արդյունավետ կազմակերպելու նպատակով գործարկվել է նոր թեժ գիծը՝ 8107 հեռախոսահամարով: Աշխատանքային իրավունքի բնագավառում ԱԱՏՄ գործունեության թափանցիկությունն ապահովելու և դիմում բողոքներին արձագանքելու, կապը հանրության հետ ավելի արագ և արդյունավետ կազմակերպելու նպատակով 2021 թվականին գործարկվել է աշխատողներից անանուն բողոքների ստացման employeeprotect համակարգը: Նշված շրջանակներում ակնկալվում է աշխատողի աշխատանքային իրավունքի պաշտպանության նոր մեխանիզմի վերաբերյալ իրազեկում, որը հնարավորություն կընձեռի բացահայտել ներքին խնդիրները, դժգոհությունները և առաջարկները, որոնք աշխատանքային պրակտիկայում կարող են խոչընդոտ հանդիսանալ: Փորձնական գործարկվել է կայքը և աշխատանքային իրավունքի խախտումների հետ կապված ստացվել են դիմում-բողոքներ: Կայքը լիարժեք գործարկվել է 2020 թվականի հոկտեմբերի 1-ից:

ԱԱՏՄ-ի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը և քաղաքականություն մշակող պետական մարմիններին (վերջիններիս առաջարկով, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ), ներկայացվել են օրենսդրական փոփոխությությունների առաջարկություններ և տրվել կարծիքներ:

## ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Սույն ծրագիրը չի արտացոլում ԱԱՏՄ ընթացիկ գործունեությունը: Այն կազմվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1124-Ն որոշմամբ հաստատված ԱԱՏՄ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների

ընդհանուր նկարագիրը, ինչպես նաև ԱԱՏՄ-ում իրականացված վարչական վարույթների վիճակագրությունը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ երեք բաժնից՝

**1. ԱԱՏՄ վերահսկողության ոլորտների ընդհանուր իրավիճակը,**

**2. ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում առկա խնդիրներ և բացահայտված ռիսկերը,**

**3. ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված, ինչպես նաև կանխարգելիչ և իրազեկման միջոցառումները և դրանց ժամանակացույցը:**

Երրորդ բաժինը ներառում է հետևյալ երկու հավելվածները.

1. ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումներ,
2. ԱԱՏՄ կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ:

## ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ա) ԱԱՏՄ 2017, 2018 և 2019 թվականներին ստուգումներ (թեմատիկ ստուգում) չի իրականացրել՝ ստուգումների տարեկան ծրագրի, ստուգաթերթերի և նշված գործառույթը կանոնակարգող իրավական այլ ակտերի բացակայության պատճառով:

ԱԱՏՄ 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված էր իրականացնել 700 թեմատիկ ստուգում 647 տնտեսավարող սուբյեկտների մոտ (ըստ 5 ոլորտների), որոնցից՝ 547 բարձր ռիսկայնությամբ, 153 միջին: Հրապարակվել է 605 հանձնարարագիր, այդ թվում 5՝ ըստ անհրաժեշտության, 50 համատեղ:

2022 թվականին ընդամենը իրականացվել է 830 ստուգում (ստուգում և վերստուգում) և 15 ստուգում՝ ընթացք 2021 թ., որից ավարտվել է 664 (ստուգման ակտ՝ 471, տեղեկանք՝ 170, ուժը կորցրած ճանաչված հանձնարարագիր՝ 22, չեղյալ ճանաչելու

մասին՝ 1) ստուգում, իսկ 181 ստուգում հաշվետու ժամանակահատվածի ավարտի դրությամբ ընթացքի մեջ է:

Թեմատիկ ստուգումների և վերստուգումների ամփոփ տվյալներ

*Աղյուսակ 1*

**ԸՆԴԱՄԵՆԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ/ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ**

| ՈԼՈՐՏ | Հանձնարարագիր/ 2022թ. ծրագիր | Ստուգում՝ ըստ անհրաժեշտության | 2021թ. վերստուգում | 2022թ. վեր-ստու-գում | 2020թ. վերստուգում | Ընթացք 2021թ | Ստուգման արդյունքներ | | | | | | Կարգադրագիր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Ընդամենը | Ակտ/ ակտի նախագիծ | Տեղեկանք | Ուժը կորցրած ճանաչել | Չեղյալ ճանաչելու մասին | Ընթացքի մեջ | |
| Աշխատանքային իրավունք | **202** | **0** | 0 | 13 | 0 | 0 | **215** | 129 | 15 | 1 | 0 | 70 | 107 |
| Աշխատանքի անվտանգություն | **128** | **0** | 17 | 23 | 13 | 2 | **183** | 110 | 41 | 3 | 1 | 28 | 100 |
| Բուժ | **53** | **0** | 21 | 13 | 4 | 3 | **94** | 55 | 21 | 2 | 0 | 16 | 50 |
| Դեղ | **85** | **5** | 12 | 40 | 1 | 3 | **146** | 68 | 55 | 13 | 0 | 10 | 63 |
| Հիգիենա | **87** | **0** | 6 | 40 | 1 | 2 | **136** | 71 | 30 | 3 | 0 | 32 | 70 |
| Անվտանգություն, Իրավունք | **27** | **0** | 0 | 2 | 0 | 0 | **29** | 17 | 3 | 0 | 0 | 9 | 17 |
| Բուժ, Հիգիենա | **22** | **0** | 11 | 2 | 0 | 5 | **40** | 19 | 5 | 0 | 0 | 16 | 18 |
| Բուժ, Դեղ | **1** | **0** | 0 | 0 | 0 | 0 | **1** | 1 | 0 | 0 | 0 | 0 | 1 |
| Բուժ, Դեղ, Հիգիենա | **0** | **0** | 1 | 0 | 0 | 0 | **1** | 1 | 0 | 0 | 0 | 0 | 1 |
| **Ընդամենը** | **605** | **5** | **68** | **133** | **19** | **15** | **845** | **471** | **170** | **22** | **1** | **181** | **427** |

2021 թվականի համեմատ 2022 թվականին ռիսկի վրա հիմնված թեմատիկ ստուգումների (այդ թվում վեստուգումներ, 2021 թվականին հարուցված և 2022 թվականին ավարտված ստուգումներ) թվերի պատկերը ըստ վերահսկողության ոլորտների հետևյալն է.




բ) ԱԱՏՄ գործունեության ընթացքում վերահսկողությունն իրականացվել է դիմում-բողոքների հիման վրա, ինչպես նաև վարչական մարմնի նախաձեռնությամբ (ներառյալ ՀՀ վարչապետի հանձնարարականները) հարուցված վարչական վարույթների միջոցով:

- ✓ **2017** թվականին ԱԱՏՄ դեռևս գտնվել է ձևավորման փուլում, և վարչական վարույթներ չեն իրականացվել:
- ✓ **2018** թվականին իրականացվել է **208** վարչական վարույթ,
- ✓ **2019** թվականին՝ **1674** վարչական վարույթ,
- ✓ **2020** թվականին ՝ **911** վարչական վարույթ,
- ✓ 2021 թվականին՝ 1462 վարչական վարույթ,

Հետևաբար, 2020 թվականի համեմատ՝ 2021 թվականին ԱԱՏՄ կողմից օրենքով սահմանված կարգով հարուցված վարչական վարույթների թիվն աճել է 551-ով՝ շուրջ 60%-ով:


ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

2022 թվականին ԱԱՏՄ-ի կողմից ընդամենը հարուցվել է 1 636 վարչական վարույթ (առ 01.11.2021 թ.՝ 1178, 458-ով (39%) ավելի), այդ թվում Տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ 1226, դիմումի հիման վրա՝ 410: Կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով հարուցված վարչական վարույթների թիվը՝ 177: Խախտումները վերացնելու համար տրվել է 348 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման հիմքով՝ 1230 վարույթ կարճվել է, այդ թվում 150՝ դիմումի հիմքով:



Այսպես, ըստ ոլորտների՝

ԱԱՏՄ հաշվետու ժամանակահատվածում ստացել է 594 (2021 թ. առ 01.11.21թ.՝

*Աղյուսակ 2*

**Տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթների ամփոփ տվյալներ՝ ըստ ոլորտների (2022թ. հունվար-հոկտեմբեր)**

| Հ/Հ | Տեսչական մարմնի ոլորտը | Հարուցված վարչական վարույթներ | Տեսչական մարմնի նախաձեռնությամբ | Դիմումի հիման վրա | Տրվել է կարգադրագիր | Կարճման որոշում | Որոշում տույժ նշանակելու մասին | Տուգանքների գումարի չափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ | 287 | 196 | 91 | 55 | 214 | 46 | 1,911,000 |
| 2 | բժշկական օգնության և սպասարկման ոլորտ | 162 | 158 | 4 | 65 | 126 | 31 | 4,320,000 |
| 3 | դեղերի շրջանառության ոլորտ | 209 | 204 | 5 | 113 | 87 | 31 | 15,910,000 |
| 4 | աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ոլորտ | 978 | 668 | 310 | 115 | 803 | 587 | 261,677,155 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **1636** | **1226** | **410** | **348** | **1230** | **695** | **283,818,155** |

567, 27-ով ավելի) դիմումներ և բողոքներ, որից 48-ը վերահասցեագրվել է, 24-ը վերադարձվել է, 108-ին տրվել են համապատասխան պարզաբանումներ: Քաղաքացիներից ստացված 410 դիմումների (մոտ 68,3%), հիման վրա իրականացվել են վարչական վարույթներ:


ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
(374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am




Վարչական վարույթների ընթացքում տնտեսավարող սուբյեկտների գերակշիռ մասի մոտ հայտնաբերվել են օրենսդրության պահանջների բազմաթիվ, այդ թվում՝ անվտանգության տեսանկյունից բարձր ռիսկեր ենթադրող խախտումներ, արձանագրվել է օրենսդրության պահանջների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության ոչ բավարար մակարդակ վերահսկողության բոլոր ոլորտներում:

գ) ՀՀ կորոնավիրուսի (COVID-19) հնարավոր ներթափանցման շրջանում և հետագայում երկրում արտակարգ դրության հայտարարման առաջին իսկ օրվանից ԱԱՏՄ **ՍԲՀԿ**-ներում ապահովվել է ուժեղացված ռեժիմով աշխատանք՝ **24/7** գրաֆիկով հերթապահություն, իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ: Արտակարգ դրության շրջանում՝

Տեսչական մարմնի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի, Մեղրիի, Բավրայի, «Շիրակ» օդանավակայանի, Բագրատաշենի, Այրում-Ջիլիզայի և Գոգավան-Պրիվոլնոյեի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերում (այսուհետ՝ ՍԲՀԿ) հերթափոխային եղանակով ապահովվել է 24 ժամյա ուժեղացված ռեժիմով աշխատանքը՝ պայմանավորված COVID-19 վարակի պանդեմիայով և իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ: այդ թվում.

- ՍԲՀԿ-ն տեղեկատվական էլեկտրոնային կայքերի միջոցով մշտապես հետևել է այլ երկրներում համաճարակաբանական իրավիճակին և վարակների հնարավոր տարածման ուղիներին: Առավել մեծ ուշադրություն է դարձվել կորոնավիրուսի COVID-19 շտամով պայմանավորված վարակին,

- ՀՀ պետական սահմանի անցման կետում վարակիչ հիվանդությունների, կասկածելի դեպքերի վաղ հայտնաբերման նպատակով պարբերաբար բարձրացվում է ՍԲՀԿ աշխատողների զգոնությունը, ուսուցանվել են Կապիկի ծաղիկ հիվանդության, Ղրիմ-Կոնգոյի հեմոռագիկ տենդով հիվանդության ժամանակ գործողությունների ստանդարտ ընթացակարգի, կասկածելի դեպքերի հայտնաբերմանն ու կանխարգելման ուղղված աշխատանքների վերաբերյալ,

- իրազեկվել են կորոնավիրուսի «օմիկրոն» շտամի տարածվող BA4, BA5 ենթատեսակների կասկածելի դեպքերի վաղ հայտնաբերմանն ու կանխարգելման ուղղված աշխատանքների վերաբերյալ,

- ՍԲՀԿ-ն սերտ համագործակցել է «Զվարթնոց» Մ/Օ-ում գործող այլ ծառայությունների և պետական սահմանի անցման կետում հսկողություն և վերահսկողություն իրականացնող կառույցների աշխատողների հետ: Կախված արագ փոփոխվող հանգամանքներից, պարբերաբար փոփոխվել և համաձայնեցվել են համատեղ ընթացակարգերը, պարբերաբար տեղեկացվել են վարակիչ հիվանդությունների, հատկապես COVID-19 վարակի, կլինիկական նշանների, կասկածելի դեպքերի (հիվանդների) վաղ հայտնաբերման, կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման, աշխատողների անհատական պաշտպանության և հայտնաբերման դեպքում պատասխան գործողությունների վերաբերյալ:

- Մաքսատան տարածքում վերահսկողություն է իրականացվում ամենօրյա սանիտարահիգիենիկ և ախտահանման աշխատանքների իրականացման նկատմամբ:

2022 թվականի առաջին 4 ամիսների ընթացքում իրականացվել է 17332 ստուգայց:

ե) **ԱԱՏՄ 2022 թվականին թեժ գծով ստացված հարցումների և դիմում-բողոքների վերաբերյալ.**

ԱԱՏՄ-ի «Թեժ գիծ» ծառայությամբ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացվել է **4866** զանգ և **114** Ֆեյսբուքյան հարցում:

«Թեժ գծով» ստացված զանգերի բաշխումն ըստ ոլորտների՝

- Աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն՝ 2798 (57,5%),
- Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն՝ 240 (5%),
- Դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն՝ 91 (1,9%),
- Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության վարչություն՝ 105 (2%)
- Նախարարի հրաման՝ 309 (6,4%),
- Տեղեկատվություն՝ 779 (16%),
- ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 543 (11%),
- Առաջարկ՝ 1 (0,02%),
- Ֆեյսբուքյան հարցում՝ 114:



Քաղաքացիների հարցերը մեծ մասամբ վերաբերել են ՀՀ աշխատանքային օրենսդրության վերահսկողությանը, մասնավորապես՝ ամենամսյա աշխատավարձերը ուշացնելուն, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի բացակայության դեպքում վերջնահաշվարկի չվճարման դեպքերին: Որոշ զանգեր վերաբերել են աշխատանքային պայմանագրի վաղաժամ լուծման, աշխատավարձի թերի վճարման, վերջնահաշվարկի չվճարման և/կամ ոչ ամբողջությամբ վճարման, հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունքի խախտման, երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձի աշխատանքային պայմանագրի լուծման, հղիության նպաստի ոչ լիարժեք վճարման, ինչպես նաև երեխայի խնամքի արձակուրդում գտնվողի նպաստի չվճարման դեպքերին:

Զգալի թվով զանգեր վերաբերել են օտարերկրյա քաղաքացիների՝ ՀՀ-ում աշխատանքի անցնելու ընթացակարգերին:

Քաղաքացիներից ստացված զանգերի հաջորդ գերակշիռ մասը վերաբերել է Առողջապահության նախարարի 17-Ն հրամանում կատարված փոփոխություններին:

Որոշ զանգեր վերաբերել են 2022 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի դրույթներին, որի համաձայն արգելվում է դրանց ցուցադրությունն ու գովազդը:

## 1.1. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏ

2022 թվականին նախատեսված էր իրականացնել 126 թեմատիկ ստուգում, այդ թվում 24 համատեղ: 2022 թվականին հրապարակվել է 136 (2022թ. տարեկան ծրագիր՝ 87, 2020թ. վերստուգում՝ 1, 2021թ. վերստուգում՝ 6, 2022թ. վերստուգում՝ 40, ընթացք 2021թ.՝ 2) հանձնարարագիր: Ավարտվել է 104 թեմատիկ ստուգում, որից 71-ը ստուգման ակտ, այդ թվում 70 կարգադրագիր խախտումների և թերությունների

վերացման մասին, 30-ը տեղեկանք, 3 ուժը կորցրած ճանաչված, ընթացքի մեջ է 32 թեմատիկ ստուգում:

2022 թվականին ԱԱՏՄ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում ստացել է 140 դիմումներ և բողոքներ, որից 91 դիմումների (մոտ 65%), հիման վրա իրականացվել են վարչական վարույթներ: 15-ին տրվել են համապատասխան պարզաբանումներ: Մյուսները վերահասցեագրվել է, կամ վերադարձվել:

Ընդամենը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում հարուցվել է 287 վարչական վարույթ (առ 01.11.2021 թ.՝ 354, 66-ով (23%) պակաս), այդ թվում Տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ 196, դիմումի հիման վրա՝ 91: Կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով հարուցված վարչական վարույթների թիվը՝ 108: Խախտումները վերացնելու համար տրվել է 55 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, 214 վարույթ կարճվել է, այդ թվում 26՝ դիմումի հիմքով:

Ստուգումների և վարչական վարույթների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ որպես պատասխանատվության միջոցներ ընդունվել է 135 որոշում տույժ նշանակելու մասին, ընդհանուր առմամբ սահմանվել է 6 391 000 դրամի տուգանք: ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 6 011 500 դրամ:

### 1.1.1 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

ԱԱՏՄ-ի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվող գործունեության արդյունքում պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող խախտումները պայմանավորված են մինչ այդ ԱԱՏՄ-ի կողմից վերահսկողության ոլորտում օրենսդրության պահանջների չիմացությամբ և ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջների ոչ պատշաճ պահպանմամբ՝ որոշ տնտեսավարող սուբյեկտների կողմից:

**Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում** 2022 թվականին վերահսկողության ենթարկված տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները՝

✓ ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 25-Ն հրամանով հաստատված «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման, թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմեր,

✓ ՀՀ առողջապահության նախարարի 2006 թվականի օգոստոսի 16-ի N 933-Ն հրամանով հաստատված «Ռադիոհաճախականության տիրույթի էլեկտրամագնիսական ճառագայթումներ (ՌՀԷՄՃ) N 2.1.8-010-06 սանիտարական կանոններ և նորմեր»,

✓ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 06-ի N 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմեր,

✓ ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոններ և նորմեր,

✓ ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանով հաստատված «Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէազերծման մշակմանը և մանրէազերծմանը


ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

ներկայացվող պահանջներ» N 3.1.1-029-2015 սանիտարական կանոններ և հիգիենիկ նորմեր,

✓ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր, ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N2-III-Ա2-1 սանիտարական նորմերի և կանոնների պահանջների պահպանումը խախտելը:

## 1.2 ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ

2022 թվականին նախատեսված էր իրականացնել 80 թեմատիկ ստուգում, այդ թվում 24 համատեղ: 2022 թվականին հրապարակվել է 136 (2022թ. տարեկան ծրագիր՝ 76, 2020թ. վերստուգում՝ 4, 2021թ. վերստուգում՝ 33, 2022թ. վերստուգում՝ 15, ընթացք 2021թ.՝ 8) հանձնարարագիր: Ավարտվել է 104 թեմատիկ ստուգում, որից 76-ը ստուգման ակտ, այդ թվում 70 կարգադրագիր խախտումների և թերությունների վերացման մասին, 26-ը տեղեկանք, 2 ուժը կորցրած ճանաչված, ընթացքի մեջ է 32 թեմատիկ ստուգում:

2022 թվականին ԱԱՏՄ-ի բժշկական օգնության և սպասարկման ոլորտում ստացել է 67 դիմումներ և բողոքներ, որից 9-ը վերահասցեագրվել է, 8-ը վերադարձվել է, 46-ին տրվել են համապատասխան պարզաբանումներ: Քաղաքացիներից ստացված 4 դիմումների, հիման վրա իրականացվել են վարչական վարույթներ:

Ընդամենը **բժշկական օգնության և սպասարկման** ոլորտում հարուցվել է 162 վարչական վարույթ (2021թ. առ 01.11.2021 թ. ՝ 207, 45-ով (28%) պակաս), այդ թվում Տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ 158, դիմումի հիման վրա՝ 4: Կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով հարուցված վարչական վարույթների թիվը՝ 18: Խախտումները վերացնելու համար տրվել է 65 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, 126 վարույթ կարճվել է:

Ստուգումների և վարչական վարույթների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ որպես պատասխանատվության միջոցներ ընդունվել է 453 որոշում տույժ նշանակելու մասին, ընդհանուր առմամբ սահմանվել է 20 860 000 դրամի տուգանք: ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 13 375 000 դրամ:

## 1.2.1 ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

ԱԱՏՄ-ի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվող գործունեության արդյունքում պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող խախտումները պայմանավորված են մինչ այդ ԱԱՏՄ-ի կողմից վերահսկողության ոլորտում օրենսդրության պահանջների և ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջների ոչ պատճաշ պահպանմամբ՝ որոշ տնտեսավարող սուբյեկտների կողմից:

**Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում** տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են՝

✓ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի,

✓ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով,

✓ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասի, ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի «Դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի թույլտվության տրամադրման կարգը և այդ գովազդին ներկայացվող պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1608-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1422-Ն որոշման հավելվածի 25-րդ, 26-րդ, 29-րդ կետերով սահմանված պահանջների,


ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
(374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

✓ ՀՀ Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան ավագ բուժաշխատողի գրասենյակների, բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների և հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության ու սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները հաստատելու մասին» N 1936-Ն որոշման հավելված 1-ի և 2-ի,

✓ ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 25-ի «Լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների արդյունքում կազմվող բժշկական ձևերը հաստատելու մասին» N 76-Ն հրամանի,

✓ ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի օգոստոսի 7-ի N 14-Ն և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2008 թվականի օգոստոսի 11-ի N 109-Ն համատեղ հրամանի, հավելված N 2-ի, կետ 9-ի,

✓ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով:

## 1.3 ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2022 թվականին նախատեսված էր իրականացնել 87 թեմատիկ ստուգում, այդ թվում 2 համատեղ: 2022 թվականին հրապարակվել է 146, (2022թ. տարեկան ծրագիր՝ 85, ըստ անհրաժեշտություն ՝5, 2020թ. վերստուգում՝ 1, 2021թ. վերստուգում՝ 12, 2022թ. վերստուգում՝ 40, ընթացք 2021թ.՝ 3) հանձնարարագիր: Ավարտվել է 136 թեմատիկ ստուգում, որից 68-ը ստուգման ակտ, այդ թվում 63 կարգադրագիր խախտումների և թերությունների վերացման մասին, 55-ը տեղեկանք, 13 ուժը կորցրած ճանաչված, ընթացքի մեջ է 10 թեմատիկ ստուգում:

2022 թվականին ԱԱՏՄ-ի դեղերի շրջանառության ոլորտում ստացել է 5 (2021 թ. առ 01.11.21թ.՝ 14, 9-ով պակաս) դիմումներ և բողոքներ, որից 1-ը վերահասցեագրվել

է, 1-ը վերադարձվել է: Քաղաքացիներից ստացված 5 դիմումների, հիման վրա իրականացվել են վարչական վարույթներ:

Ընդամենը հարուցվել է 209 վարչական վարույթ (2021թ. առ 01.11.2021 թ.՝ 262, 53-ով (25%) պակաս), այդ թվում Տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ 158, դիմումի հիման վրա՝ 4: Կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով հարուցված վարչական վարույթների թիվը՝ 23: Խախտումները վերացնելու համար տրվել է 113 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, 87 վարույթ կարճվել է:

Ստուգումների և վարչական վարույթների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ որպես պատասխանատվության միջոցներ ընդունվել է 66 որոշում տույժ նշանակելու մասին, ընդհանուր առմամբ սահմանվել է 42 370 000 դրամի տուգանք: ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 16 250 000 դրամ:

## 1.3.1 ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

ԱԱՏՄ-ի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվող գործունեության արդյունքում պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող խախտումները պայմանավորված են մինչ այդ ԱԱՏՄ-ի կողմից վերահսկողության ոլորտում  օրենսդրության պահանջների չիմացությամբ և ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջների ոչ պատճաշ պահպանմամբ՝ որոշ տնտեսավարող սուբյեկտների կողմից:

**Դեղերի շրջանառության ոլորտում** տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են՝

✓ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1080-Ն որոշման հավելված 1-ի 51-րդ կետի պահանջների պահպանումը:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
(374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

- ✓ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ և **12-րդ** մասերի, 28-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի,
- ✓ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի և 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների պահպանումը:

## 1.4 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏ

2022 թվականին նախատեսված էր իրականացնել 407 թեմատիկ ստուգում, այդ թվում 28 համատեղ: 2022 թվականին հրապարակվել է 427, (2022թ. տարեկան ծրագիր՝ 398, 2020թ. վերստուգում՝ 13, 2021թ. վերստուգում՝ 17, 2022թ. վերստուգում՝ 25, ընթացք 2021թ.՝ 2) հանձնարարագիր: Ավարտվել է 319 թեմատիկ ստուգում, որից 256-ը ստուգման ակտ, այդ թվում 224 կարգադրագիր խախտումների և թերությունների վերացման մասին, 59-ը տեղեկանք, 4 ուժը կորցրած ճանաչված (տնտեսավարող սուբյեկտները փաստացի գործունեություն չեն իրականացրել), ընթացքի մեջ է 108 թեմատիկ ստուգում:

2022 թվականին ԱԱՏՄ-ի աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում ստացել է 382 (2021թ. առ 01.11.21թ.՝ 301, 81-ով ավելի) դիմումներ և բողոքներ, որից 16-ը վերահասցեագրվել է, 7-ը վերադարձվել է, 47-ին տրվել են համապատասխան պարզաբանումներ: Քաղաքացիներից ստացված 310 դիմումների հիման վրա իրականացվել են վարչական վարույթներ:

Ընդամենը հարուցվել է 978 վարչական վարույթ (2021թ. առ 01.11.2021 թ.՝ 355, 623-ով (175%) ավելի), այդ թվում Տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ 668, դիմումի հիման վրա՝ 310: Կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով հարուցված վարչական վարույթների թիվը՝ 28: Խախտումները վերացնելու համար տրվել է 115 կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման բացակայության հիմքով՝ 803 վարույթ կարճվել է:

Ստուգումների և վարչական վարույթների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ որպես պատասխանատվության միջոցներ ընդունվել է 781 որոշում տույժ նշանակելու մասին, ընդհանուր առմամբ սահմանվել է 775 907 811 դրամի տուգանք: ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 73 567 202 դրամ:

### 1.4.1 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

ԱԱՏՄ-ի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվող գործունեության արդյունքում պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող խախտումները պայմանավորված են մինչ այդ ԱԱՏՄ-ի կողմից վերահսկողության ոլորտում օրենսդրության պահանջների չիմացությամբ և ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջների ոչ պատճաշ պահպանմամբ՝ որոշ տնտեսավարող սուբյեկտների կողմից:

**Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում**՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կապված են հետևյալ իրավական ակտերի հետ.

- ✓ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածի պահանջները, այն է՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում չեն կնքվել աշխատանքային պայմանագրեր,
- ✓ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի պահանջները, այն է՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հաշվարկվել և չի վճարվել վերջնահաշվարկ,
- ✓ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի պահանջները, այն է՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հաշվարկվել և չի վճարվել աշխատավարձ,
- ✓ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի պահանջները,
- ✓ ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 255-րդ հոդվածի պահանջները,
- ✓ ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 102-րդ հոդվածի պահանջները,

- ✓ ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 171-րդ հոդվածի պահանջները,
- ✓ ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 15-ի N 1089-Ն որոշման պահանջները:

# ԲԱԺԻՆ 2. ԱԱՏՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

## 2.1. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

ԱԱՏՄ կողմից վերահսկողության գործընթացի կանոնակարգմանը խոչընդոտող մի շարք հարցեր ենթակա են լուծման, մասնավորապես.

1.1.1. Պետական սահմանի հսկիչ կետերում սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության ներքին ընթացակարգի սահմանում,

1.1.2. տեսուչների վարքագծի կանոնների սահմանում,

1.1.3. ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1124-Ն և 2020 թվականի ապրիլի 30-ի թիվ 718-Ն որոշումների մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծերի մշակում:

1.1.4. Իրազեկման աշխատանքների իրականացում վերահսկողության բոլոր ոլորտներում:

## 2.2. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Արդյունավետ վերահսկողության որոշակի խոչընդոտ են ՀՀ օրենսդրության մի շարք բացեր, ուստի տարընթերցումներից խուսափելու և իրարամերժ արդյունքները բացառելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել նշված ոլորտները կանոնակարգող և ՀՀ-ում գործող որոշ իրավական ակտերում կատարել փոփոխություններ և լրացումներ:

# ԲԱԺԻՆ 3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Սույն ծրագրի երկրորդ բաժնում ներկայացված խնդիրները վերացնելու և Տեսչական մարմնի առավել արդյունավետ գործունեությունն ապահովելու համար 2023 թվականին նախատեսվում են իրականացնել վերոշարադրյալ խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված մի շարք, այդ թվում՝ կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ:

Նշված միջոցառումները ներկայացված են «Միջոցառումներ՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված» Հավելված N 1-ում և «Միջոցառումներ՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման 2023 թվականի» Հավելված N 2-ում:

Հավելված N 1

# Միջոցառումներ
## Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված

| Հ/Հ | Միջոցառում | | Ակնկալվող արդյունք | Կատարող (համակատարող) ստորաբաժանում | Ժամկետ /ամիս, տարի/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **Դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն** | | | | | |
| 1. | ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշմամբ հաստատված դեղերի մանրածախ առևտրի վերահսկողության (ՏԳՏԴ ԾԱԾԿԱԳԻՐ՝ G47.73) N 2.1, «Դեղերի, դեղանյութերի, հետազոտվող դեղագործական արտադրանքի արտադրության, դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության բնագավառի վերահսկողության» (ՏԳՏԴ ծածկագիր C21)՝ N 2.2 և դեղերի մեծածախ իրացման վերահսկողության (ՏԳՏԴ | Նախագծի մշակում | ՀՀ-ում ռիսկի վրա հիմնված տարեկան ստուգումների իրականացման ընթացքում առաջացած խնդիրների շտկում և վերահսկողության լիարժեք իրականացում | ԴՇՎՎ | 16.01.2023 |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | ԴՇՎՎ<br><br>Կարծիքներ՝ ՏԿ, ԻԱՓՎ | 30.01.2023 |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | ԴՇՎՎ | 06.02.2023 |
| | | Նախագիծը Գրասենյակ ներկայացում | | ԴՇՎՎ | 24.02.2023 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ծածկագիր՝ G46.46.2) N 2.3 ստուգաթերթերի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկի ներկայացում Գրասենյակ | | | | |
| 2. | ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկի ներկայացում Գրասենյակ | Նախագծի մշակում | Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դեղերի բացթողման կարգավիճակը (դեղատոմսով կամ առանց դեղատոմսի) գրանցված դեղի բացթողման կարգավիճակին համապատասխանեցման համար սահմանված ժամկետների հստակեցում | ԴՇՎՎ | 10.03.2023 |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | ԴՇՎՎ<br><br>Կարծիքներ՝ ՏԿ, ԻԱՓՎ | 16.03.2023 |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | ԴՇՎՎ | 29.03.2023 |
| | | Նախագիծը Գրասենյակ ներկայացում | | ԴՇՎՎ | 17.04.2023 |
| 3. | ««Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկի ներկայացում Գրասենյակ | Նախագծի մշակում | Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի փաթեթավորմանը, պիտակավորմանը, մակնշմանը երկայացվող պահանջների առկայություն | ԴՇՎՎ | 13.03.2023 |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | ԴՇՎՎ<br><br>Կարծիքներ՝ ՏԿ, ԻԱՓՎ | 27.03.2023 |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | ԴՇՎՎ | 10.04.2023 |
| | | Նախագիծը Գրասենյակ ներկայացում | | ԴՇՎՎ | 26.04.2023 |
| 4. | «Դեղերի մասին» ՀՀ օրենքում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ | Նախագծի մշակում | Ներհիվանդանոցային դեղատների նկատմամբ վերահսկողական գործիքակազմերի առկայություն | ԴՇՎՎ | 04.05.2023 |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | ԴՇՎՎ | 30.06.2023 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | օրենսգրքում և ըստ անհրաժեշտության այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկի ներկայացում Գրասենյակ | | | Կարծիքներ՝ ՏԿ, ԻԱՓՎ | |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | ԴՇՎՎ | 31.07.2023 |
| | | Նախագիծը Գրասենյակ ներկայացում | | ԴՇՎՎ | 16.08.2023 |
| 5. | «Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին նախագծի առաջարկի ներկայացում Գրասենյակ | Նախագծի մշակում | Ոչնչացում իրականացնող կազմակերպությունների կողմից դեղերի ոչնչացման գործընթացի նկատմամբ վերահսկողական գործիքակազմի առկայություն | ԴՇՎՎ | 19.06.2023 |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | ԴՇՎՎ<br>Կարծիքներ՝ ՏԿ, ԻԱՓՎ | 13.07.2023 |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | ԴՇՎՎ | 28.07.2023 |
| | | Նախագիծը Գրասենյակ ներկայացում | | ԴՇՎՎ | 19.08.2023 |
| **Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության վարչություն** | | | | | |
| 6. | Առկա բժշկական օգնության և սպասարկման ոլորտների ստուգաթերթերի խմբագրում, նախագծերի ներկայացում Գրասենյակ | Թիվ 3.1-ից մինչև 3.17 Ստուգաթերթերի նախագծերի խմբագրում՝ համաձայն նոր խմբագրված գործող իրավական ակտերի | Թեմատիկ ստուգումների իրականացման արդյունավետության բարձրացում | ԲՕՍՎՎ | Մարտի 3-րդ տասնօրյակ |
| 7. | Վերահսկողության շրջանակներում կիրառվող անհատական և լոկալ իրավական ակտերը նորմատիվ բնույթ կրող իրավական ակտերով | Ոլորտային իրավական ակտերի ուսումնասիրություն, լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում | Օրենսդրական բացերի նվազեցում, ԱԱՏՄ-ի վերահսկողական գործառույթների համար իրավական հիմքերի հստակեցում, գործունեության արդյունավետության բարձրացում | ԲՕՍՎՎ | 30.03.2023 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | փոխարինելու վերաբերյալ առաջարկների ներկայացում լիազոր մարմնին | | | | |
| **Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն** | | | | | |
| 8. | Ոլորտային նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ քննարկման կազմակերպում՝ համապատասխան լիազոր մարմնի և տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչների մասնակցությամբ | Հրավեր առաջարկ լիազոր մարմնի և տնտեսվարող սուբյեկտի ներկայացուցիչներին | Ստուգումների արդյունքում ի հայտ եկած տարընթերցումների և այլ խնդիրների վերաբերյալ հարցերի պարզաբանում, ինչը հետագայում հիմք կհանդիսանա նորմատիվ իրավական ակտերի փոփոխության համար | ՀՍՀՎՎ | Յուրաքանչյուր եռամսյակ |
| 9. | Հիգիենիկ ոլորտի ռիսկի վրա հիմնված ստուգաթերթերի վերանայում և փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում Գրասենյակ | Առկա ստուգաթերթերի մասնագիտական և իրավական առումով կատարելագործում | Թեմատիկ ստուգումների իրականացման արդյունավետության բարձրացում | ՀՍՀՎՎ | 01.02.2023-30.11.2023 |
| Աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն | | | | | |
| 10. | Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման մեջ փոփոխությունների կատարման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում Գրասենյակ | Նախագծի մշակում | Լրացուցիչ արձակուրդի իրավունք ձեռք բերող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկի հստակեցում | ԱՕՎՎ | 01.02.2023 |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | ԱՕՎՎ<br>Կարծիքներ՝ ՏԿ, ԻԱՓՎ | 15.02.2023 |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | ԱՕՎՎ | 28.02.2023 |
| | | Նախագիծը Գրասենյակ ներկայացում | | ԱՕՎՎ | Մարտի երրորդ տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11. | Պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն՝ ուղղված հարկադիր աշխատանքի, մարդկանց թրաֆիքինգի, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի վերացմանը | Ընթացակարգի մշակում | Հարկադիր աշխատանքի, մարդկանց թրաֆիքինգի, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի նվազեցում | ԱՕՎՎ | Մայիսի երկրորդ տասնօրյակ |
| | | Ընթացակարգի նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | ԱՕՎՎ<br><br>Կարծիքներ՝ ՏՎ, ԻԱՓՎ | Հունիսի առաջին տասնօրյակ |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | ԱՕՎՎ | Հունիսի երկրորդ տասնօրյակ |
| | | Նախագիծը Գրասենյակ ներկայացում | | ԱՕՎՎ | Հունիսի երրորդ տասնօրյակ |
| 12. | Ոլորտային ստուգաթերթերի մշակում և ներկայացում Գրասենյակ | Նախագծի մշակում | Ստուգաթերթերի առկայություն տնտեսական գործունեության տեսակների համար, ինչպես նաև 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշմամբ հաստատված շինարարության բնագավառի վերահսկողության N 4.3 ստուգաթերթերը լրամշակված են՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 26-ի ՀՀՇՆ 13-02-2022 «Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր, անվտանգության տեխնիկա շինարարությունում» N 21-Ն հրամանը:<br>Աշխատանքի անվտանգության ոլորտում տնտեսավարողների կողմից իրավական ակտերի պահպանում | ԱՕՎՎ | Փետրվարի առաջին տասնօրյակ |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | ԱՕՎՎ<br><br>Կարծիքներ՝ ՏՎ, ԻԱՓՎ | Փետրվարի երկրորդ տասնօրյակ |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | ԱՕՎՎ | Փետրվարի երրորդ տասնօրյակ |
| | | Նախագիծը Գրասենյակ ներկայացում | | ԱՕՎՎ | Մարտի առաջին տասնօրյակ |
| 13. | Միջազգային կառույցների հետ համագործակցության շարունակականության ապահովում | ԱՊՀ անդամ երկրների և Մոնղոլիայի տարածաշրջանային դաշինքի (РАИТ СНГ и Монголии, RALI) տարեկան ծրագրով | Առողջության համար աշխատանքի անվտանգ և անվնաս պայմանների իրավունքի պահպանման և ապահովում, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության կատարելագործում, | ԱՕՎՎ | Շարունակական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | նախատեսված աշխատանքների իրականացում<br><br>ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված օրենսդրության կատարելագործման, այդ թվում՝ աշխատանքային իրավունքների և աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման, ճանապարհային քարտեզի իրագործման աշխատանքներին մասնակցություն<br><br>Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) հետ համագործակցության իրականացում՝ օրենսդրության կատարելագործման, ԱՄԿ ստանդարտների կիրառման ապահովման, աշխատանքի վերահսկողության տեսուչների վերապատրաստումների և փորձի փոխանակման բնագավառներում<br><br>Իրականացնել աշխատանքներ Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի | աշխատողների աշխատանքային իրավունքի պաշտպանության վիճակի բարելավում, Տեսչական մարմնի գործունեության ապահովում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան | | |



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | (МАИТ, IALI) լիիրավ անդամ դառնալու ուղղությամբ | | | |
| 14. | Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման պահանջները սահմանող ՀՀ օրենսդրության կատարելագործման և ամբողջականացման համար համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում ու Գրասենյակ ներկայացում | ՀՀ ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (CEPA) նախատեսված օրենսդրության մոտարկման շրջանակներում նախագծի մշակում | Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման պահանջները սահմանող ՀՀ օրենսդրության կատարելագործում և ամբողջականացում ոլորտում անվտանգության ապահովում | ԱՕՎՎ | Մինչև տարվա վերջ |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | ԱՕՎՎ<br><br>Կարծիքներ՝ ՏԿ, ԻԱՓՎ | |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | ԱՕՎՎ | |
| | | Նախագիծը Գրասենյակ ներկայացում | | ԱՕՎՎ | |
| 15. | «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկի ներկայացում Գրասենյակ | Նախագծի մշակում | Գործատուի կողմից աշխատողների աշխատաժամանակի օրական կամ շաբաթական հաշվառում չիրականացնելու համար նախատեսված վարչական տույժի խստացում | ԱՕՎՎ | Մայիսի առաջին տասնօրյակ |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | ԱՕՎՎ<br><br>Կարծիքներ՝ ՏԿ, ԻԱՓՎ | Մայիսի երկրորդ տասնօրյակ |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | ԱՕՎՎ | Մայիսի երրորդ տասնօրյակ |
| | | Նախագիծը Գրասենյակ ներկայացում | | ԱՕՎՎ | Հունիսի առաջին տասնօրյակ |

**Հավելված N 2**

Միջոցառումներ
Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի
կանխարգելիչ և իրազեկման 2023 թվականի

| Հ/Հ | Միջոցառում | Արդյունք (խնդիրների լուծում) | | Կատարող ստորաբաժանում/Ժամկետ | |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում գործող տնտեսավարողների շրջանում Տեսչական մարմնի գործառույթների մասին իրազեկում | Տեղեկատվական նյութերի պատրաստման և տարածման միջոցով ՁԼՄ-ների կողմից հոլովակների, տեսանյութերի պատրաստմանը աջակցելու և տարածելու միջոցով | Տնտեսավարողների շրջանում Տեսչական մարմնի գործառույթների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում | ԻԽՀՏԱԲ | 01.01.2023թ.-30.12.2023թ. |
| 2. | Համացանցի և սոցիալական ցանցերի միջոցով ոլորտային նշանակալի օրերի հանրային իրազեկում | Իրազեկման նյութերի պատրաստում և հրապարակում | Ոլորտային նշանակալի օրերի իրազեկում | ԻԽՀՏԱԲ | Ըստ օրացույցային օրերի |
| 3. | Ոլորտային ստորաբաժանումների կողմից տնտեսավարող սուբյեկտների համար սեմինար-դասընթացների կազմակերպում և անցկացում | Դասընթացի կազմակերպում | Իրազեկվածության բարձրացում | ԻԽՀՏԱԲ Ոլորտային վարչություններ | 01.01.2023թ.-30.06.2023թ. |
| 4. | ԱԱՏՄ մասնագիտական ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների ընթացիկ արդյունքների ներկայացում և իրազեկում | Իրազեկման նյութի պատրաստում | Հանրության իրազեկվածության բարձրացում | ԻԽՀՏԱԲ | Մշտապես |
| 5. | ԱԱՏՄ վերահսկողական գործառույթների ընթացքում | Նոր հաստատված ստուգաթերթերի և նորմատիվ | Վերահսկողական գործառույթների առավել | ԻԽՀՏԱԲ | Ըստ հաստատված ժամանակացույցի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կիրառվող իրավական ակտերի և ստուգաթերթերի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների շրջանում իրազեկում | իրավական ակտերի հրապարակում՝ ԱԱՏՄ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում | արդյունավետ և թափանցիկ իրականացում, տնտեսավարողների շրջանում իրազեկվածության բարձրացում | | |
| 6. | ԱԱՏՄ Տարածքային կենտրոնների մարզային ճանաչելիության բարձրացում | Տարածքային կենտրոնների ընթացքիկ աշխատանքների վերաբերյալ մարզային ԶԼՄ-ների կողմից հոլովակների, տեսանյութերի պատրաստմանը աջակցելու միջոցով | Հանրության իրազեկվածության և ՀՀ մարզերում Տեսչական մարմնի ճանաչելիության բարձրացում | ԻԽՀՏԱԲ | 01.01.2023թ.-30.12.2023թ. |
| 7. | Մարդկանց թրաֆիքինգի աշխատանքային շահագործման, ներառյալ երեխաների թրաֆիքինգի և շահագործման, հարկադիր աշխատանքի վտանգի նվազեցման ուղղություններով սեմինար-քննարկումների անցկացում | Շահագրգիռ մարմինների, կազմակերպությունների, դիվանագիտական ներկայացուցչությունների հետ համագործակցություն<br><br>Իրազեկման աշխատանքներ, այդ թվում՝ մինչև 18 տարեկան անձանց, երիտասարդների հետ սեմինարների, դասընթացների միջոցով | ՀՀ-ում 2020-2022 թթ. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրով և ծրագրի իրականացման ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացում<br>Թրաֆիքինգի, աշխատանքային շահագործման, հարկադիր աշխատանքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում, այդ թվում մինչև 18 տարեկան անձանց | ԻԽՀՏԱԲ<br>ԱՕՎՎ | Շարունակական |
| 8. | ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի | Հաստատված պարբերականությամբ ՀՀ ԱԱՏՄ կենտրոնական ապարատի և տարածքային կենտրոնների | Աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային | ԻԽՀՏԱԲ<br>ԱՕՎՎ | Շարունակական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | պահանջների ապահովման նպատակով գործատուների (ներկայացուցիչների) և աշխատողների (ներկայացուցիչների) համար սեմինարների և խորհրդատվությունների իրականացում | կողմից սեմինարների իրականացում | պայմանագրերի պահանջների ապահովման ուղղությամբ գործատուների և աշխատողների իրազեկվածության մակարդակի բարելավում | | |